

սաւոր կերպով ընդունեցին Մեծ Մարդուն:

Այդ հանճարեղ գիւտը դարձաւ մեր ապօփ վերածնութեան բրաբիոնը, հայ բաժան բաժան ապրող ցեղերի միութեան օղակը, համազային ոգու գիտակցութեան արշալոյսը, նրա կուլտուրական կետնքի նախակարտովետը, նրա մէջ արտայայտութիւն գտու հինգերորդ ոսկէ դարը և իր հանճարեղ մատենագիրներով—քերթողահայր Մովսէս Խորենացի, «Մեղրալեղու» Եղիշէ, ոճի ու դարս ձուածքների ճարտարապետ-ականագործ ո. Գրիգոր Նարեկացի, Ներսէս Շնորհալի և այլք, —որոնք հին մատենագրութեան պատմութեան լուսապայծառ աստղերը դարձաւ:

Առաջին մեծ գործը, որը տառերի գիւտից յետոյ կատարուեցաւ—Ս. Գրիգոր թարգմանութիւնն էր Ս. Մեսրոպ և Ս. Ստհակի ջանքերով. Ս. Գրիգոր թարգմանութեամբ հայերը կանխեցին ուրիշ՝ ներկայումս մեղանից կուլտուրապէս բարձր կանգնած ապկերին:

Այսօրուայ տօնը պիտի իրաւամբ համարուի անգուգական համազային, համահայկական տօն. նա հաւասարապէս պիտի բնը կրանքի ու հրաւանքի աղքիւր լինի համայն հայերի համար, առանց դաւանական խրութեան. նա հաւասարապէս պայտամունքի տառկայ պիտի լինի ազգով մի և՛ հայ լուսաւորչականի, և՛ հայ կաթոլիկի, և՛ հայ բողոքականի համար, որովհետեւ այդ գրերի գիւտից օգտուել են համայն հայերը, որովհետեւ նա դարձաւ ամենի համար հոգիների յայս, մոքերի լոյս:

Ցիշելի է Մխիթարեանների անգնահատելի բեղմնաւոր ծառայութիւնները հայ մատենագրութեան, գրականութեան, այլեալլ գրական ճիշդաւորութեանց մէջ, իրենց տուած մի շարք անմոռանալի կորիփէներովի Ուրեմն թող այդ մեր տօնը համարուի միենոյն ժամանակ համազային վեհագոյն զաղափարի, համերաշխութեան միութեան, եղբայրութեան գերագոյն ոկզրունքների տօն:

Այդ Մեծ Յօրելեանը յաւերժացնելու համար Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսը կարգադրել է կազմել մի գպարցական դրամագլուխ (Փօնդ) «Մեղրուպեան լումայ» անունով, որի տոկոսներով պիտի պահպանուին մեր եկ. ծխ. գպարցները և բացուին նորերը:

Այդ կարգադրութիւնը վերին աստիճանի խելացի է և միանգամայն համապատասխան ու նպատակայարմար Մեծ տօնի վեհութեան, նա ընդ ամին միանգամայն մօտիկ է հանճարեղ Գտշի ոգուն ու ցանկութիւններին, ուստի արժանի է միանգամայն ամեն տեսակ համակրութեան և օգնութեան համայն հայերի կողմից անխտիր:

Հայը իր փրկութիւնը պիտի գտնի ներսից, նա կեանքի տենդուտ յարածուն մաքառումների մէջ պիտի պահի իր գոյութիւնը միայն կրթութեամբ ու լուսաւութեամբ, իսկ դրա համար հարկաւոր են դպրոցներ. եթէ կամիք, կասեմ աւելին՝ հայի աղատագրական խոյեանքները կարող են մարմնահալ միայն իրենց ներքին

իւաղաղ կուլտուրական գարգացմամբ, կրթական կուլտուրական հաստատութիւններով՝ յարմարեցրած ժամանակի պահանջներին. Այդ բանը հասկացաւ դեռ 1500 տարի առաջ հայ գրերի սպանչելագործ Ս. Մեսրոպը և 45 տարի շարունակ լրջիկ քարողի առաքելութիւնը ստանձնած տարածում է հայերի մէջ քրիստոնէական լոյս և բացւում էր ղպրոցներ.

Երախտագիտական խորին յարգանք և յաւերժանուաց յիշատակ Մեծ Մարդու անուան —

Հայ գրերի գիւտի յօրելեանի հետ այսօր կատարւում է և տպագրութեան 400-ամենայ յօրելեանը. Այդ հանճարեղ գիւտը կատարել է գերմանացի մի հասարակ արհեստագործ—Յովիաննէս Գուտամբերգը 1443 թ. այդ գիւտը ունի համաշխարհային չանակութիւն և իրաւամբ Գուտամբերգը կուլտում է «մարդկութեան բարերար»:

Այդ հանճարեղ գիւտը ի միջի այլ ապկերի, միջոց տուեց մեզ՝ հայերիս աղատուելու ձեռագիրների հոգեմաշ արտագրութիւններից և միլիոնաւոր օրինակներով տարածելու ժողովրդի ամեն խաւերում զիր ու ղպրութիւնն Առաջին հայ աղարանները մենք ունեցանք արտասահմանեան բաղաքներում—Աննետիկ (1512 թ.), Վիեննաւ Ամստերդամ, Մարսէլ, Պոլիս ևայլն. իսկ ներկայումս ոչ միայն քաղաքներում, այլև գիւղագաղաքներում կարելի է տեսնել տպարաններ:

Տպագրութեան գիւտով առանձին նշանակութիւն ստացաւ և Ս. Մեսրոպի գրերի գիւտը. հայը կրօնական ազգ լինելուց գառնում է կուլտուրական ազգ:

Յաւերժ յիշատակ Գուտամներգի հանճարին:

Կար. Թէմիւրազբան

ԽՆՁԻ ԾՆԱԽՆԴԻ ՀԱՅԻ ԳԻՒՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Մեր մօտ չորսհազարմեայ պատմութիւնը բաժանւում է շատ և շատ լրջանների, սակայն ամենայն իրաւամբ նրան կարելի է բաժանել երկու խոչոր լրջանի—Հեթանուական և քրիստոնէական, որովհետեւ այդ երկու լրջաններից իրաւանչիւրը մի բոլորովին ուրոյն պատկեր է ներկայացնում իրանից:

Քրիստոնէութեան մուտքը Հայաստանում մի նոր դարակլում բացեց հայոց կեանքում նիշտ է, նախ քան քրիստոնէական լրջանը հայ ժողովուրդը ապրում էր անկախ կեանքով, նա նոյնիսկ հասաւ քաղաքական այնպիսի մեծութեան ու փառքի, որպիսին նա երբէք չունեցաւ քրիստոնէական լրջանում. բայց հայնպէս հեթանուական լրջանը շատուց նրան այն ինչ մի ժողովրդի ուրոյն գոյութեան գլխաւոր գործոնն է եղել, նրա ներքին կեանքի հիմնաքարը—հայկական քաղաքակրթութիւն հայկական արտայայտութեամբ:

Եթէ այդ հեթանուական լրջանը, որ այնքան հարուստ էր քաղաքական անցքերով, հերոսական արկածներով անցաւ գնաց, առանց մեզ համար թողնելով այն

ՄԵԾ ՅՈՒԵԼԵԱՆԸ

Անցեալ 1912 թ. հոկտ. 13-ից արդէն բայցուել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ: ամեն տեղ, հայութեան բոլոր շրջաններում, 1500-ամեայ տառերի գիւտի և 400-ամեայ հայ տպագրութեան համազգային ըաղաքակրթական մեծ տօնը—յօրելեանը, եկեղեցական և դպրոցական հանդէսներով:



ԳԷՌՈՐԴ Դ.
ԿԱՅԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այս համազգային Մեծ Յօրելեանի համար ժամանակ էր նշանակուած մի ամբողջ տարի—1912 թ. հոկտ. 13-ից մինչև 1913 թ. հոկտ. 12-ը, որի ընթացքում կաղմակերպուեցին դըպրոցներում և ազգային հաստատութիւնների մէջ երեկոյթներ, ցերեկոյթներ, համերգներ, դասխոսութիւններ ժողովրդի և աշակերտութեան համար, այլև կատարուեցին ճանապարհորդութիւններ դէպի Օշական, ուր գտնուում է Սուրբ Մեսրոպի գերեզմանը:

Սա մի խելացի, հեռատես և նպատակայարմար կարգադրութիւն էր, որով արդէն ամեն մի առարկութիւն, պատճառաբանութիւն և տրտուն չքանում էին մէջտեղից, և միութեան ու համերաշխ գործելու ուղին հարթուած էր:

Մի տարին բաւական միջոց էր մտածելու,

ժողովներ անելու, յօրելեանական մասնաժողովներ կազմելու և ծրագիրներ մշակելու համար, թէ ինչպէս կարելի կլինի յաւերգութիւններ այդ ազգային պատմական մեծ տօնը մի բարենպատակ ձեռնարկութեամբ:

Այս դպրոցական ֆօնդը մի կարևոր և անհրաժեշտ միջոցը համարուեց անմահացնելու Ս. Սահակ և Ս. Մեսրոպի երկու իրարից անբաժան անունները:

Յօրելեանական տարին փակւում է այսօր Ս. Էջմիածնում ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Հրաւէրենք կարդում ամբողջ հայութեան՝ առանց գաւանանքի խորութեան չխնայել իրենց լուսան այդ մեծ գործի համար:

ԱՆՊԱՅՄԱՆ ԴԱՑՈՂՈՐՏԵԼԻ ՎԱՐՄՈՒՆՔ

Զգիտենք ինչ անուն տալ այն անպայման տգեղ ու դատապարտելի վարմունքին, որ թոյլ է տուել իրեն Թիֆլիզի հայ գրողների ընկերութիւնը:

Կատարուում է Համազգային Յօրելեան, որոշուած է կազմել այդ առթիւ միայն դպրոցական ֆօնդ: Մի ամբողջ տարի այդ ընկերութիւնը փորձեց յաւերգութեան ինդիրը լուծել տալ իրեն նպաստաւոր ձեռով, որ հոգեոր վարչութիւնը պաշտօնապէս ժողովարարութիւն կատարէ եթէ ոչ ամբողջապէս իր համար, գոնէ դըպրոցական ֆօնդի կողքին նաև իր օգտին՝ իրեն գրական ֆօնդ: Սակայն չյարգուեց ինդիրը. Ամենայն Հայոց Կաթողիկոսը շատ իրաւամբ նպատակայարմար համարեց չկապել համազգային կրթական գործը մի մասնաւոր, շատ որոշ գունաւորութիւննեցող ընկերութեան բազդի հետ, մասնաւանդ. որ ժողովրդի գիտակից ու լայն խաւերը պահանջում էին ամեն կողմից միայն և միմիայն դպրոցական ֆօնդ:

Եթէ այդ մարդոց մէջ շիտակութեան նշոյ անգամ լինէր, պէտք է որ այս հանդիսաւոր օ